ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2022 թ. ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ



Բովանդակություն

1. ԹԵՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 4

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

2.1. Ամփոփ տեղեկություն 2022 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման մասին 4

2.2. Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքներն ըստ առարկաների 5

2.3. Միավորների բաշխման բնութագրիչները 6

2.4. 2021 թ. և 2022 թ. արտաքին ընթացիկ գնահատումների միջին միավորների համեմատությունը 6

2.5. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների 7

3. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ 8

4. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ 10

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները Տավուշի մարզում 11

5. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՄԵՌԵՐԻ 19

6. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՍՔԵՐԻ 21

6.1. Սովորողների բաշխումն ըստ հոսքերի 21

6.2. Մասնակիցների միջին միավորներն ըստ հոսքերի 21

7. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ 23

7.1. Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի 23

7.2. Միջին միավորներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի 23

8. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 25

9. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ 27

Եզրակացություն 28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից պարբերաբար անցկացվում է արտաքին ընթացիկ գնահատում, որը հնարավորություն է տալիս. ա) արձանագրելու այդ հաստատությունների ավագ դասարաններում սովորողների առաջադիմությունը և պարզելու դրա դինամիկան, բ) կազմելու և փորձարկելու առաջադրանքների նոր տեսակներ՝ հետագայում միասնական քննությունների թեստերում օգտագործելու համար: 2022 թվականի նոյեմբերի 14-ից դեկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 99 հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից իրականացվել է արտաքին ընթացիկ գնահատում:

Առանձնակի ուշադրություն է դարձվել Տավուշի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին, որտեղ 2021-2022 ուսումնական տարում 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում, 2022-2023 ուսումնական տարում արդեն 3-րդ, 6-րդ, 8-րդ և 11-րդ դասարաններում փորձնական նպատակով ներդրվել են առարկայական նոր չափորոշիչներ ու ծրագրեր: Մարզում ընթացիկ գնահատումը կազմակերպվել է հանրակրթական ուսումնական ծրագիր իրականացնող բոլոր ուսումնական հաստատություններում (1 վարժարանում, 4 ավագ և 51 միջնակարգ դպրոցներում):

Նպատակը

2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման նպատակը 11-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգումն է և առաջադիմության շարժի գնահատումը: Արտաքին ընթացիկ գնահատման հետ միաժամանակ աշակերտների և ուսուցիչների շրջանում անցկացվել է հարցում, որի նպատակը եղել է աշակերտների՝ այս կամ այն առարկան սովորելու դրդապատճառների պարզաբանումը, ուսուցիչների դասավանդման արդյունավետության բարձրացման գործում ազդեցիկ գործոնների բացահայտումը:

Ընտրանքը

Արտաքին ընթացիկ գնահատման ընտրանքը ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում գտնվող 13 ավագ և 84 միջնակարգ դպրոցների, ինչպես նաև 2 վարժարանների 11-րդ դասարանի 2279 աշակերտներ են:

Արտաքին ընթացիկ գնահատման կազմակերպումը

Արտաքին ընթացիկ գնահատումը կազմակերպվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչների կողմից, որոնք վերահսկել և ուղղորդել են գնահատման ողջ գործընթացը, ապահովել աշակերտների ինքնուրույն աշխատանքը:

Գրավոր աշխատանքների տևողությունը եղել է 60 րոպե: Յուրաքանչյուր առարկայի գնահատման համար կիրառվել է թեստերի 4 տարբերակ: Գնահատման համար կիրառվել է 10 միավորային սանդղակ:

Աշակերտների գրավոր աշխատանքները, պատասխանների ձևաթղթերի հետ միասին, տեղափոխվել են ԳԹԿ: Կարճ և ընդարձակ պատասխանով առաջադրանքները ստուգվել են առարկայական մասնագետների կողմից, արդյունքները անցկացվել են ձևաթղթերի համապատասխան դաշտերում, որից հետո ձևաթղթերը ենթարկվել են համակարգչային ստուգման: Արդյունքները տրվել են համապատասխան դպրոցներին՝ դասամատյաններում գրանցելու համար:

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների վերլուծությունը

Ընթացիկ գնահատման արդյունքների և հարցաթերթի վերլուծությունը կատարվել է հետևյալ հիմնական ուղղություններով.

- **ընդհանուր** վերլուծություն, որտեղ ներկայացվել են Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում անցկացված արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները,
- **առարկայական** վերլուծություն, որտեղ ներկայացվել է թեստերի և թեստային առաջադրանքների վերլուծությունն ըստ որակական բնութագրիչների և թեստերում ընդգրկված բաժինների (տրամադրվել է առարկայական մասնագետներին),
- **երկրորդային վերլուծություն**, որտեղ ներկայացվել են ընթացիկ գնահատման ընթացքում անցկացված հարցման արդյունքները, դրանց կապը սովորողների առաջադիմության հետ, ներկայացվել են նաև առաջադիմության վրա ազդող գործոնները:

Վերլուծության իրականացումը

Վերլուծությունն ամբողջությամբ իրականացվել է IATA, Excel, ACCESS, SPSS ծրագրերի միջոցով: Արտաքին և ներքին գնահատման համակարգերի արդյունքները, ինչպես նաև հանրակրթական առարկաների համեմատությունները, իսկ հաջորդ տարիներին նաև աշակերտերի առաջադիմության դինամիկան համեմատելու համար, որոնք բնույթով և սանդղակավորմամբ տարբեր են, միավորները ներկայացված են առաջադրանքի պատասխանի ժամանակակից տեսությամբ (Item response theory-IRT), մինչդեռ հանրակրթական ուսումնական հաստատություններին արդյունքները տրամադրվել են Z-սանդղակով՝ ներքին գնահատմանը համադրելի դարձնելու համար: Առաջադրանքի պատասխանի ժամանակակից տեսությունը (այսուհետև՝ IRT[1]) դասական տեսության բարելավված մոդելն է, որը հնարավորություն է տալիս ստանալ առավել ճկուն և հավաստի տեղեկություններ:

[1] IRT տեսության մանրամասն նկարագրությունը տրված է http://www.atc.am/files/verlucutyunner/2016/2016_petrvar_yntacik.pdf (էջ 4)

1. ԹԵՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Արտաքին ընթացիկ գնահատման երկու առարկաների թեստերի կառուցվածքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Թեստի յուրաքանչյուր առաջադրանք գնահատվել է 0 կամ 1 միավորով:

Աղյուսակ 1

Առարկան	Առաջադրանքների քանակը		Առավելագույն միավորը
	ընտրովի	կարճ	
Հայոց լեզու	15	5	20
Հանրահաշիվ	11	7	18

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ամփոփ տեղեկություն 2022 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման մասին

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է աշակերտների մասնակցությունը արտաքին ընթացիկ գնահատմանը:

Աղյուսակ 2

Առարկան	Հայտագրված աշակերտների թիվը	Մասնակցած աշակերտների		Չմասնակցած աշակերտների		Անբավարար գնահատական ստացած աշակերտների	
		թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հայոց լեզու	2279	2037	89,4	242	10,6	128	6,3 %
Հանրահաշիվ		1987	87,2	292	12,8	179	9 %

2.2. Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքներն ըստ առարկաների

Ստորև ներկայացված են հանրակրթական առարկաների միավորների բաշխման հիստոգրամները: Միավորները ներկայացված են IRT տեսությամբ, որպեսզի կարողանանք դրանք համեմատել նախորդ տարվա և հաջորդ տարի անցկացվող արտաքին գնահատումների արդյունքների հետ:

Հիստոգրամ 1



Հիստոգրամ 2



Վերը ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք, որ միավորների բաշխման կորերը համաչափ են, երկու առարկաների դեպքում էլ գերակշռում է 5 միավորը:

2.3. Միավորների բաշխման բնութագրիչները

Աղյուսակ 3

Առարկան	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը[2]	Ստանդարտ շեղումը (ցրվածու-թյունը)[3]	Հուսալիու-թյունը[4]
Հայոց լեզու	2037	5,67	0,08	1,65	0,78
Հանրահաշիվ	1987	4,85	0,08	1,19	0,80

Համեմատելով երկու առարկաների միջին միավորները՝ տեսնում ենք, որ աշակերտները «Հայոց լեզու» առարկայից ավելի լավ արդյունք են ցուցաբերել, քան «Հանրահաշիվ» առարկայից: «Հայոց լեզու» առարկայից աշակերտների միջին միավորը մոտ է 1-10 գնահատականների սանդղակի միջին միավորին (5,5):

Գնահատման ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները նորմայի սահմաններում են, հուսալիությունը՝ ընդունելի:

2.4. 2021 թ. և 2022 թ. արտաքին ընթացիկ գնահատումների միջին միավորների համեմատությունը

Դիագրամ 1



[2]Միավորների գնահատման ստանդարտ սխալը համարվում է նորմային մոտ, եթե գործակիցը չի գերազանցում սանդղակի միավոր քայլը:

[3]10 միավորանոց սանդղակում միավորների բաշխումը համարվում է լավ, եթե ստանդարտ շեղումը մեծ է 1,5-ից:

[4] Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

Դիագրամ 1-ում տեսնում ենք, որ «Հայոց լեզու» առարկայից աշակերտների միջին միավորը նախորդ տարվա համեմատ բարձրացել է 0,7 միավորով, իսկ «Հանրահաշիվ» առարկայից՝ իջել 0,4 միավորով:

2.5. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների

Ինչպես արդեն նշվել է՝ գնահատականների խմբերի բաշխման ուսումնասիրությունը և համեմատությունն իրականացվել է IRT մաթեմատիկական մոդելի կիրառմամբ, որով գնահատվել է սովորողների պատրաստվածության մակարդակը՝ հիմնվելով տարբեր բարդության առաջադրանքների ճիշտ պատասխանի հավանականության գնահատման վրա: IRT-ն թույլ է տալիս գնահատականները ստանդարտացնել և բերել գնահատման ընդհանուր համակարգի, որը համեմատելի է դարձնում արտաքին ընթացիկ գնահատման առարկաների գնահատականները: Սույն վերլուծության մեջ գնահատականները խմբավորված են ըստ առաջադիմության չորս խմբերի՝ անբավարար (1-3), բավարար (4-5), լավ (6-8) և գերազանց (9-10), որոնց տոկոսային թվերը ներկայացված են ստորև բերված դիագրամում:

Դիագրամ 2



3. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Արտաքին և ներքին գնահատումների գնահատականները միմյանց հետ համեմատելիս կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ներքին գնահատման 10 միավորանոց համակարգը արհեստականորեն փոխվել է, և ամենացածր գնահատականը դարձել է 3-ը (սանդղակի միջին միավորը՝ 7,0), մինչդեռ արտաքին գնահատման դեպքում կիրառվել են 1-ից 10 գնահատականները (սանդղակի միջին միավորը՝ 5,5): Թեև, ի տարբերություն արտաքին գնահատման, ներքին գնահատման ժամանակ կիրառվում են բազմաբնույթ գործիքներ, այդուհանդերձ, ներքին գնահատման մեջ մեծ է սուբյեկտիվության գործոնը:

Աղյուսակ 4

Առարկան	Գնահատումը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)
Հայոց լեզու	Արտաքին	5,67	0,08	1,65
	Ներքին	6,76	0,05	2,15
Հանրահաշիվ	Արտաքին	4,85	0,08	1,19
	Ներքին	6,33	0,04	1,98

Աղյուսակում տեսնում ենք, որ «Հայոց լեզու» առարկայից ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունը 1,1 միավոր է, «Հանրահաշիվ» առարկայից՝ 1,5 միավոր:

Ստորև բերված հիստոգրամներում ներկայացված են 2022 թվականին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման գնահատականների և ներքին գնահատման գնահատականների բաշխման համադրությունները «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից:

Հիստոգրամ 3



Հիստոգրամ 4



4. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

Աղյուսակ 5-ում ըստ մարզերի ներկայացված են 2021 թվականին և 2022 թվականին իրականացված արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած աշակերտների միջին միավորները (ստանդարտ շեղումները):

Աղյուսակ 5

Մարզը	Հայոց լեզու		Հանրահաշիվ	
	2021թ.	2022 թ.	2021թ.	2022 թ.
Սյունիք	**5,4** (1.0)	**6,1** (1.5)	**5,5** (1.7)	**5,1** (1.2)
Շիրակ	**5,3** (1.2)	**6,1** (1.7)	**5,5** (1.3)	4,8 (0.9)
Գեղարքունիք	**5,2** (1.1)	5,5 (1.8)	**5,5** (1.6)	4,7 (1.2)
Լոռի	4,9 (1.1)	5,6 (1.6)	5,1 (1.1)	**5,0** (1.0)
Տավուշ	4,9 (1.1)	5,5 (1.5)	5,1 (1.3)	4,8 (1.3)
Ընդհանուր	5,04 (1.2)	5,7 (1.7)	5,3 (1.4)	4,9 (1.2)

Սյունիքի մարզում երկու առարկաներից էլ գրանցվել են ընդհանուր միջին միավորից բարձր, իսկ Տավուշի մարզում՝ ցածր արդյունք: Շիրակի մարզում՝ հայոց լեզվից, իսկ Լոռու մարզում՝ հանրահաշվից է գրանցվել բարձր արդյունք:

Ստորև բերված դիագրամում երկու առարկաների համար ներկայացված են աշակերտների միջին միավորները 2021 թ. և 2022 թ.:

Դիագրամ 3



Համեմատելով 2021 թ. և 2022 թ. արդյունքները, տեսնում ենք, որ բոլոր մարզերում «Հայոց լեզու» առարկայից աշակերտների միջին միավորները բարձրացել են, «Հանրահաշիվ» առարկայից՝ իջել:

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները Տավուշի մարզում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտաքին ընթացիկ գնահատման ժամանակ առանձնակի ուշադրություն է դարձվել Տավուշի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին, ուստի ստորև բերված աղյուսակներում մարզի ուսումնական հաստատությունների վիճակագրական տվյալները ներկայացված են ըստ տարածաշրջանների ուսումնական հաստատությունների:

Մասնակիցների թվի քիչ լինելը, հատկապես «Հանրահաշիվ» առարկայից, պայմանավորված է նրանով, որ 2021 թվականի արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցները հնարավորություն են ունեցել ընտրելու բոլոր առարկաներից երկուսը: Ընտրություն կատարելիս աշակերտնորը նախապատվությունը տվել են «Հայոց լեզու» առարկային (44.2 տոկոս): «Հայոց պատմություն» առարկան ընտրել է մասնակիցների 13,4 տոկոսը, «Հանրահաշիվ» առարկան՝ 12,4 տոկոսը, (ամբողջ վերլուծությունը ներկայացված է http://www.atc.am/files/verlucutyunner/ բաժնում):

Աղյուսակ 6

Իջևան

Հայոց լեզու						
Ուսումնական հաստատությունը	**2021 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 5.04, մարզի միջին միավորը՝ 4.9)			**2022 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 5,7, մարզի միջին միավորը՝ 5,5)		
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Այգեհովիտի միջն. դպրոց	19	5,26	1,45	15	6,07	2,34
Ենոքավանի միջն. դպրոց	9	5,22	0,83	7	5,86	1,07
Իջևանի ավագ դպրոց	118	5,21	0,99	130	5,85	1,45
Իջևանի վարժարան	21	4,9	0,83	30	5,77	1,22
Աչաջրի միջն. դպրոց	40	4,55	0,68	34	5,62	1,85
Ազատամուտի միջն. դպրոց	25	4,96	0,94	30	5,5	1,76
Վազաշենի միջն. դպրոց	5	5,6	0,55	6	5,5	1,87
Սևքարի միջն. դպրոց	24	4,88	1,08	22	5,14	1,08
Խաշթառակի միջն. դպրոց	12	4	1,48	13	5,08	1,80
Գետահովիտի միջն. դպրոց	7	5,43	0,54	8	5	1,51
Սարիգյուղի միջն. դպրոց	14	4,5	1,51	14	4,86	2,28
Ն. Ծաղկավանի միջն. դպր.	3	5	-	6	4,67	1,37
Գանձաքարի միջն. դպրոց	28	4,46	0,88	29	4,59	1,35
Կայանավանի միջն. դպրոց	7	4	1,00	5	3,8	0,45
Բերքաբերի միջն. դպրոց	-	-	-	3	3,33	0,58
Ընդհանուր	332	4,92	1,1	352	5,49	1,6

Հանրահաշիվ						
Ուսումնական հաստատությունը	**2021 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 5.31, մարզի միջին միավորը՝ 5.1)			**2022 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 4.85, մարզի միջին միավորը՝ 4.8)		
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Իջևանի ավագ դպրոց	38	4,76	1,2	79	5,85	1,3
Սարիգյուղի միջն. դպրոց	3	5,67	0,6	12	5,33	0,7
Այգեհովիտի միջն. դպրոց	3	4	1,7	18	5,28	1,1
Ազատամուտի միջն. դպրոց	11	5,45	0,5	32	4,88	0,8
Ենոքավանի միջն. դպրոց	1	5	-	7	4,71	0,8
Խաշթառակի միջն. դպրոց	3	3	1,7	13	4,69	0,8
Իջևանի վարժարան	4	4,25	0,5	27	4,63	0,8
Գանձաքարի միջն. դպրոց	8	4,13	1,0	28	4,43	0,9
Սևքարի միջն. դպրոց	6	4,17	1,8	27	4,41	0,8
Աչաջրի միջն. դպրոց	6	4,5	0,8	33	4,18	1,0
Կայանավանի միջն. դպրոց	-	-	-	5	4	0,0
Ն. Ծաղկավանի միջն. դպր.	1	5	-	6	3,83	0,8
Վազաշենի միջն. դպրոց	-	-	-	6	3,83	0,8
Գետահովիտի միջն. դպրոց	-	-	-	9	3,56	1,0
Բերքաբերի միջն. դպրոց	-	-	-	3	3,33	0,6
Ընդհանուր	84	4,65	1,2	305	4,87	1,2

Նոյեմբերյան

Հայոց լեզու						
Ուսումնական հաստատությունը	**2021 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 5.04, մարզի միջին միավորը՝ 4.9)			**2022 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 5,7, մարզի միջին միավորը՝ 5,5)		
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Ջուջևանի միջն. դպրոց	6	5,33	2,1	5	6,6	2,2
Ոսկևանի միջն. դպրոց	10	4,8	0,6	15	6,2	1,3
Կողբի թիվ 1 միջն. դպրոց	12	5,08	1,3	15	6,07	1,5
Նոյեմբերյանի ավագ դպրոց	24	5,13	1	30	5,67	1,3
Կողբի թիվ 2 միջն. դպրոց	9	5,44	1,1	18	5,67	1,1
Արճիսի միջն. դպրոց	3	5	1,7	3	5,67	1,2
Դեբեդավանի միջն. դպրոց	8	5	1,5	8	5,63	1,1
Բագրատաշենի թիվ 1 միջն. դպրոց	-	-	-	21	5,57	1,7
Հաղթանակի միջն. դպրոց	7	4,29	1,6	6	5,5	2,6
Բերդավանի միջն. դպրոց	16	5,19	1	16	5,38	1,4
Այրումի միջն. դպրոց	31	5,26	1,1	26	5,35	1,7
Բարեկամավանի միջն. դպրոց	3	5,67	0,6	4	5,25	2,4
Ոսկեպարի միջն. դպրոց	3	5	0	4	5,25	0,5
Բաղանիսի միջն. դպրոց	7	4,86	1,7	4	5,25	0,5
Կոթիի միջն. դպրոց	16	4,38	1	14	5,21	1,2
Պտղավանի միջն. դպրոց	11	4,73	0,6	9	5	0,9
Դովեղի միջն. դպրոց	3	4,67	0,6	5	4,6	1,8
Զորականի միջն. դպրոց	8	3,38	1,7	7	3,57	2,1
Ընդհանուր	177	4,93	1,2	210	5,5	1,5

Հանրահաշիվ						
Ուսումնական հաստատությունը	**2021 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 5.31, մարզի միջին միավորը՝ 5.1)			**2022 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 4.85, մարզի միջին միավորը՝ 4.8)		
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Բարեկամավանի միջն. դպրոց	2	7,5	2,1	4	5,5	0,6
Դեբեդավանի միջն. դպրոց	1	5	.	9	5,22	0,4
Կողբի թիվ 1 միջն. դպրոց	2	5,5	0,7	14	5,14	0,5
Ոսկևանի միջն. դպրոց	1	6	.	14	5,14	0,7
Կողբի թիվ 2 միջն. դպրոց	6	6,33	2,3	18	4,67	0,6
Կոթիի միջն. դպրոց	3	5,33	1,2	18	4,67	0,6
Արճիսի միջն. դպրոց	2	6	0,0	3	4,67	0,6
Բերդավանի միջն. դպրոց	2	5	1,4	15	4,6	0,8
Հաղթանակի միջն. դպրոց	1	6	.	10	4,5	1,0
Ոսկեպարի միջն. դպրոց	1	6	.	4	4,5	0,6
Ջուջևանի միջն. դպրոց	1	6	.	7	4,43	0,8
Նոյեմբերյանի ավագ դպրոց	9	5,56	1,5	30	4,4	1,0
Այրումի միջն. դպրոց	2	6,5	0,7	30	4,37	1,0
Բագրատաշենի թիվ 1 միջն. դպրոց	-	-	-	19	4,05	0,6
Բաղանիսի միջն. դպրոց	4	4,5	0,6	4	4	0,8
Դովեղի միջն. դպրոց	-	-	-	5	3,6	1,3
Զորականի միջն. դպրոց	5	4	1,9	7	3,57	1,6
Պտղավանի միջն. դպրոց	-	-	-	11	3,18	1,2
Ընդհանուր	42	5,52	1,6	222	4,47	1,2

Դիլիջան

Հայոց լեզու						
Ուսումնական հաստատությունը	**2021 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 5.04, մարզի միջին միավորը՝ 4.9)			**2022 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 5,7, մարզի միջին միավորը՝ 5,5)		
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Դիլիջանի ավագ դպրոց	66	5,15	1,1	74	5,7	1,3
Գոշի միջն. դպրոց	5	4,6	2,4	5	5,6	2,1
Դիլիջանի թիվ 5 միջն. դպրոց	12	4,75	0,6	16	5,5	1,2
Հաղարծինի միջն. դպրոց	27	4,7	1,0	35	5,03	1,5
Աղավնավանքի միջն. դպրոց	-	-	-	4	4,75	1,0
Թեղուտի միջն. դպրոց	18	4,5	1,4	19	4,74	1,2
Խաչարձանի միջն. դպրոց	4	4,25	1,0	4	3	1,8
Ընդհանուր	132	4,89	1,15	157	5,32	1,4

Հանրահաշիվ						
	2021 թ. (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 5.31, մարզի միջին միավորը՝ 5.1)			**2022 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 4.85, մարզի միջին միավորը՝ 4.8)		
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Դիլիջանի ավագ դպրոց	27	5,33	0,7	74	5,62	2,039
Գոշի միջն. դպրոց	1	7	-	6	4,67	1,211
Հաղարծինի միջն. դպրոց	2	5,5	0,7	26	4,54	0,948
Դիլիջանի թիվ 5 միջն. դպրոց	11	5,55	0,5	15	4,53	0,516
Աղավնավանքի միջն. դպրոց	-	-	-	4	4,5	0,577
Թեղուտի միջն. դպրոց	-	-	-	16	4,06	1,063
Խաչարձանի միջն. դպրոց	-	-	-	4	3,5	0,577

Ընդհանուր	41	5,44	0,7	145	5,01	1,7

Բերդ

Հայոց լեզու						
Ուսումնական հաստատությունը	**2021 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 5.04, մարզի միջին միավորը՝ 4.9)			**2022 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 5,7, մարզի միջին միավորը՝ 5,5)		
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Արծվաբերդի միջն. դպրոց	16	4,31	0,9	20	6,4	2,0
Վերին Կարմիրաղբյուրի միջն. դպր.	6	5,17	0,8	8	6	2,0
Այգեպարի միջն. դպրոց	1	4	-	1	6	-
Ներքին Կարմիրաղբյուրի միջն. դպր.	10	5,3	1,5	11	5,91	2,0
Չորաթանի միջն. դպրոց	8	4,75	1,3	9	5,78	1,6
Բերդի ավագ դպրոց	23	5,17	1,0	29	5,55	0,9
Մոսեսգեղի միջն. դպրոց	7	4,71	1,1	6	5,5	1,5
Նորաշենի միջն. դպրոց	2	5	-	2	5,5	0,7
Վ. Ծաղկավանի միջն. դպրոց	12	4,33	2,0	12	5,33	1,5
Տավուշի միջն. դպրոց	10	4,1	1,0	13	5,15	1,2
Պառավաքարի միջն. դպրոց	7	4	1,2	8	5	1,3
Նավուրի միջն. դպրոց	5	4,4	0,5	4	5	0,8
Չինչինի միջն. դպրոց	2	5	-	2	5	0,0
Վարագավանի միջն. դպրոց	4	4,75	0,5	4	5	0,8
Չինարի միջն. դպրոց	2	5	-	1	5	-
Այգեձորի միջն. դպրոց	11	3,91	1,3	12	4,25	1,2
Ընդհանուր	126	4,62	1,2	142	5,5	1,2

Հանրահաշիվ						
Ուսումնական հաստատությունը	**2021 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 5.31, մարզի միջին միավորը՝ 5.1)			**2022 թ.** (առարկայի ընդհանուր միջին միավորը՝ 4.85, մարզի միջին միավորը՝ 4.8)		
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Չորաթանի միջն. դպրոց	6	5	0,9	9	5,78	0,8
Մոսեսգեղի միջն. դպրոց	2	6	1,4	7	5,71	0,8
Արծվաբերդի միջն. դպրոց	5	4,8	0,4	20	5,6	0,6
Պառավաքարի միջն. դպրոց	2	5,5	0,8	8	5	1,2
Վարագավանի միջն. դպրոց	2	5,5	0,7	4	5	0,8
Այգեպարի միջն. դպրոց	-	-	-	1	5	.
Չինարի միջն. դպրոց	-	-	-	1	5	.
Վերին Կարմիրաղբյուրի միջն. դպրոց	1	6	-	6	4,83	0,8
Ներքին Կարմիրաղբյուրի միջն. դպրոց	2	3	2,8	11	4,64	0,8
Բերդի ավագ դպրոց	5	5,8	0,8	29	4,52	1,1
Վ. Ծաղկավանի միջն. դպրոց	-	-	-	12	4,5	0,7
Նորաշենի միջն. դպրոց	-	-	-	2	4,5	0,7
Նավուրի միջն. դպրոց	-	-	-	4	4	1,4
Չինչինի միջն. դպրոց	-	-	-	2	4	0,0
Տավուշի միջն. դպրոց	-	-	-	12	3,83	1,1
Այգեձորի միջն. դպրոց	-	-	-	12	3,58	1,2
Ընդհանուր	25	5,16	1,2	140	4,72	1,1

5. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների 53,7 %-ը աղջիկներ են, 46,3 %-ը՝ տղաներ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են վիճակագրական տվյալներ՝ ըստ սեռերի:

Աղյուսակ 7

Առարկան	Սեռը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Գնահատման ստանդարտ սխալը
Հայոց լեզու	աղջիկ	1094	6,25	1,53	0,05
	տղա	943	5,65	1,68	0,06
Հանրահաշիվ	աղջիկ	1068	5,54	1,77	0,05
	տղա	919	5,62	1,81	0,06

Ստորև բերված դիագրամում ներկայացված է աշակերտների միջին միավորների համեմատությունն ըստ սեռերի:

Դիագրամ 4



Ըստ սեռերի համեմատելիս՝ տեսնում ենք, որ «Հայոց լեզու» առարկայից աղջիկների միջին միավորը 0,6 միավորով բարձր է տղաների միջին միավորից, իսկ «Հանրահաշիվ» առարկայի դեպքում, ոչ նշանակալի, բայց տղաների միջին միավորն է բարձր:

Ստորև բերված հիստոգրամներում ներկայացված են տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունները:

Հիստոգրամ 5



Հիստոգրամ 6



6. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՍՔԵՐԻ

6.1. Սովորողների բաշխումն ըստ հոսքերի

Դիագրամ 5-ում ներկայացված են արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների տոկոսային թվերն ըստ հոսքերի:

Դիագրամ 5



Միջնակարգ դպրոցում ուսուցումն իրականացվում է միայն ընդհանուր հոսքի ծրագրով, այդ պատճառով այս հոսքի աշակերտները կազմել են մասնակիցների 55,5 տոկոսը: Մյուս տիպերի հանրակրթական ուսումնական հաստատություններում, եթե կա ընտրելու հնարավորություն, ապա աշակերտները գերապատվությունը տալիս են հումանիտար հոսքին, այնուհետև տնտեսագիտական և բնագիտական հոսքերին: Ֆիզմաթ հոսքում սովորում են մասնակիցների 4,2 տոկոսը, արհեստագործական հոսքում՝ 0.7 տոկոսը և ինժեներական հոսքում՝ 0,8 տոկոսը:

6.2. Մասնակիցների միջին միավորներն ըստ հոսքերի

Աղյուսակ 8-ում ներկայացված են ըստ հոսքերի մասնակիցների թիվը, միջին միավորը և ստանդարտ շեղումը բոլոր առարկաներից: Մգացված են այն միջին միավորները, որոնք համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են կամ հավասար:

Աղյուսակ 8

Առարկան / Հոսքը	Հայոց լեզու			Հանրահաշիվ		
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Ինժեներական	17	4,9	1,17	17	**4,9**	0,66
Բնագիտական	206	**6,2**	1,71	201	**4,9**	1,11
Հումանիտար	357	**5,9**	1,64	311	4,8	1,17
Ընդհանուր	1115	5,4	1,64	1116	4,6	1,01
Տնտեսագի-տական	244	**6,1**	1,47	243	**5,8**	1,46
Ֆիզմաթ	84	**5,7**	1,28	85	**5,7**	1,00
Արհեստագործա-կան	14	5,6	2,24	14	4,5	1,02
Ընդհանուր	2037	**5,7**	1,65	1987	**4,9**	1,19

Աղյուսակ 8-ում տեսնում ենք, որ «Հայոց լեզու» առարկայից ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավոր են գրանցվել բնագիտական, տնտեսագիտական և հումանիտար հոսքերում, «Հանրահաշիվ» առարկայից՝ տնտեսագիտական և ֆիզմաթ հոսքերում:

Դիագրամ 6-ում ներկայացված են մասնակիցների միջին միավորներն ըստ հոսքերի:

Դիագրամ 6



Ինչպես տեսնում ենք դիագրամում, երկու առարկաներից էլ լավագույն արդյունքները գրանցել են տնտեսագիտական և ֆիզմաթ հոսքերում:

7. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

7.1. Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների 40.9 տոկոսը ավագ դպրոցների, 54.4 տոկոսը միջնակարգ դպրոցների և 4.7 տոկոսը վարժարանների աշակերտներ են: Աղյուսակ 9-ում ներկայացված են վիճակագրական տվյալներ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի: Մգացված են այն միջին միավորները, որոնք մեծ կամ հավասար են համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից:

Աղյուսակ 9

Առարկան	Առարկայի ընդհանուր միջին միավորը	Ավագ դպրոց			Միջնակարգ դպրոց			Վարժարան		
		Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու	**5,7**	846	**6,1**	1,58	1095	5,4	1,66	96	5,5	1,32
Հանրահաշիվ	**4,9**	799	**5,2**	1,34	1095	4,6	1,01	93	**5,1**	0,92

Վերլուծությունից պարզվել է, որ ավագ դպրոցներում սովորող աշակերտների միջին միավորները երկու առարկաներից էլ բարձր են եղել առարկայի ընդհանուր միջին միավորներից:

7.2. Միջին միավորներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Հետևյալ դիագրամներում ներկայացված են «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ», առարկաներից արտաքին ընթացիկ գնահատման մասնակից հանրակրթական

ուսումնական հաստատությունների միջին միավորների դիրքերը տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորի նկատմամբ՝ աճման կարգով:

Դիագրամ 7



Դիագրամ 8



Դիագրամներում տեսնում ենք, որ երկու առարկաների դեպքում էլ վարժարաններում և ավագ դպրոցներում սովորող աշակերտների միջին միավորները բարձր են եղել միջնակարգ դպրոցներում սովորող աշակերտների միջին միավորներից: Ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավոր գրանցած դպրոցները ներկայացված են հաջորդ բաժնում:

8. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Դիագրամ 9-ում ներկայացված են 2022 թ. արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակից հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների միջին միավորների դիրքերը սանդղակի միջին միավորի նկատմամբ: Դիագրամի յուրաքանչյուր ուղղահայաց գծերի մեջտեղում գտնվում են տվյալ ուսումնական հաստատության աշակերտների միջին միավորները երկու առարկաներից: Կապույտով նշված է Հայոց լեզվի, նարնջագույնով՝ Հանրահաշվի միջին միավորները, իսկ կարմիր կետագիծը սանդղակի միջին միավորն է (5.5): Միջին միավորները դասավորված են «Հայոց լեզու» առարկայի միջին միավորների աճման կարգով:

Դիագրամ 9



Ակնհայտ է, որ առավել շատ բարձր արդյունքներ են գրանցվել հայոց լեզվից:

Բարձր միջին միավորներով աչքի ընկած ուսումնական հաստատությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:

Աղյուսակ 10-ում ներկայացված են հայոց լեզվից ամենաբարձր միջին միավոր գրանցած 14 ուսումնական հաստատությունները:

Աղյուսակ 10

Մարզը	Ուսումնական հաստատությունը	Միջին միավորը	
		Հայոց լեզու	Հանրահաշիվ
Սյունիք	Սյունիքի միջն. դպրոց	7,83	4,83
Գեղարքունիք	Նորատուսի թիվ 1 միջն. դպրոց	7,17	4,83
Գեղարքունիք	Լճաշենի միջն. դպրոց	7,11	5,74
Սյունիք	Գորիսի թիվ 4 ավագ դպրոց	7,07	5,55
Սյունիք	Տեղի թիվ 1 միջն. դպրոց	6,8	4,4
Լոռի	Տաշիրի ավագ դպրոց	6,7	5,1
Շիրակ	Փանիկի միջն. դպրոց	6,7	5,3
Շիրակ	Արթիկի թիվ 3 ավագ դպրոց	6,6	4,8
Տավուշ	Ջուջևանի միջն. դպրոց	6,6	4,4
Գեղարքունիք	Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց	6,6	5,6
Շիրակ	Ջորակապի միջն. դպրոց	6,5	5,0
Տավուշ	Արծվաբերդի միջն. դպրոց	6,4	5,6
Սյունիք	Սիսիանի ավագ դպրոց	6,4	5,7
Տավուշ	Ոսկևանի միջն. դպրոց	6,2	5,1

Աղյուսակ 11-ում ներկայացված են այն ուսումնական հաստատությունների միջին միավորները, որոնց «Հանրահաշիվ» առարկայի միջին միավորն է ընկած սանդղակի միջին միավորից վերև:

Աղյուսակ 11

Մարզը	Ուսումնական հաստատությունը	Միջին միավորը	
		Հանրահաշիվ	Հայոց լեզու
Լոռի	Դարպասի միջն. դպրոց	6,0	5,6
Տավուշ	Իջևանի ավագ դպրոց	5,9	5,9
Տավուշ	Ջորաթանի միջն. դպրոց	5,8	5,8
Գեղարքունիք	Լճաշենի միջն. դպրոց	5,7	7,1
Սյունիք	Սիսիանի ավագ դպրոց	5,7	6,4
Տավուշ	Մոսեսգեղի միջն. դպրոց	5,7	5,5
Տավուշ	Դիլիջանի ավագ դպրոց	5,6	5,7
Տավուշ	Արծվաբերդի միջն. դպրոց	5,6	6,4
Գեղարքունիք	Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց	5,6	6,6
Շիրակ	Փոքր Մանթաշի միջն. դպրոց	5,6	5,4
Սյունիք	Գորիսի թիվ 4 ավագ դպրոց	5,6	7,1

Ուշագրավ է, որ հանրահաշվից լավագույն արդյունք ցուցաբերած 11 դպրոցներից 5-ը Տավուշի մարզի դպրոցներ են, որտեղ ինչպես նշվել է, ներդրվել են առարկայական նոր չափորոշիչներ և ծրագրեր:

9. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած 99 հանրակրթական ուսումնական հաստատություններից 4-ը եղել են խոշոր քաղաքների (100 հազարից ավելի բնակիչ), 4-ը՝ միջին քաղաքների (20-100 հազար բնակիչ), 13-ը՝ փոքր քաղաքների (մինչև 20 հազար բնակիչ), 34-ը՝ գյուղերի, 40-ը՝ սահմանամերձ և 4-ը՝ բարձրլեռնային գյուղերի ուսումնական հաստատություններ:

Դիագրամ 10



Դիագրամում տեսնում ենք, որ լավագույն արդյունքները ցուցաբերել են միջին քաղաքների աշակերտները:

Եզրակացություն

2022 թվականի նոյեմբերի 14-ից դեկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 99 հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում իրականացվել է արտաքին ընթացիկ գնահատում: Գնահատման նպատակը 11-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգումն է և առաջադիմության շարժի գնահատումը:

Նկատենք, որ առանձնակի ուշադրություն է դարձվել Տավուշի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին, որտեղ 2021-2022 ուսումնական տարում 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում, իսկ 2022-2023 ուսումնական տարում 3-րդ, 6-րդ, 8-րդ և 11-րդ դասարաններում փորձնական նպատակով ներդրվել են առարկայական նոր չափորոշիչներ ու ծրագրեր: Մարզում ընթացիկ գնահատումը կազմակերպվել է հանրակրթական ուսումնական ծրագիր իրականացնող բոլոր ուսումնական հաստատություններում (1 վարժարանում, 4 ավագ և 51 միջնակարգ դպրոցներում):

Համեմատելով երկու առարկաների միջին միավորները՝ տեսնում ենք, որ աշակերտները «Հայոց լեզու» առարկայից ավելի լավ արդյունք են ցուցաբերել, քան «Հանրահաշիվ» առարկայից:

- **2021 թ. և 2022 թ. արտաքին ընթացիկ գնահատումների միջին միավորների համեմատությունը**

Նախորդ տարվա համեմատ «Հայոց լեզու» առարկայից աշակերտների միջին միավորը բարձրացել է 0,7 միավորով, իսկ «Հանրահաշիվ» առարկայից՝ իջել 0,4 միավորով:

- **Գնահատականների խմբերի համեմատությունն ըստ առարկաների**

«Հայոց լեզու» առարկայից ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունը 1,1 միավոր է, «Հանրահաշիվ» առարկայից՝ 1,5 միավոր:

- **Աշակերտների պատրաստվածությունն ըստ վարչատարածքային միավորների**

Սյունիքի մարզում երկու առարկաներից էլ գրանցվել են ընդհանուր միջին միավորից բարձր, իսկ Տավուշի մարզում՝ ցածր արդյունքներ: Շիրակի մարզում՝ հայոց լեզվից, իսկ Լոռու մարզում՝ հանրահաշվից գրանցվել են բարձր արդյունքներ:

Համեմատելով 2021 թ. և 2022 թ. արդյունքները, տեսնում ենք որ բոլոր մարզերում «Հայոց լեզու» առարկայից աշակերտների միջին միավորները բարձրացել են, իսկ «Հանրահաշիվ» առարկայից՝ իջել:

- **Վերլուծություն ըստ սեռերի**

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած աշակերտների 53,7 տոկոսը եղել են աղջիկներ, 46,3 տոկոսը՝ տղաներ: «Հայոց լեզու» առարկայից աղջիկների միջին միավորը 0,6 միավորով բարձր է եղել տղաների միջին միավորից, «Հանրահաշիվ» առարկայի դեպքում՝ ոչ նշանակալի, սակայն բարձր է տղաների միջին միավորը:

- **Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ հոսքերի**

Վերլուծությունից պարզվել է, որ «Հայոց լեզու» առարկայից ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավոր են գրանցվել բնագիտական, տնտեսագիտական և հումանիտար հոսքերում, «Հանրահաշիվ» առարկայից՝ տնտեսագիտական և ֆիզմաթ հոսքերում:

- **Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի**

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների 40.9 տոկոսը ավագ դպրոցների, 54.4 տոկոսը միջնակարգ դպրոցների և 4.7 տոկոսը վարժարանների աշակերտներ են: Վերլուծությունից պարզվել է, որ վարժարաններում և ավագ դպրոցներում սովորող աշակերտների միջին միավորները բարձր են եղել միջնակարգ դպրոցներում սովորող աշակերտների միջին միավորներից:

- **Աշակերտների պատրաստվածությունը ըստ բնակավայրերի տիպերի**

Լավագույն արդյունքները ցուցաբերել են միջին քաղաքների աշակերտները: